են Յակոբոս եւ Յովհաննէս։ Երկու պատանի հանդերձ են փռում իշի ոտների առաջ։ Մեծ. 20½×13 սմ.։

6բ. Խաչելութիւն. Խաչեցեալի իրանը երկար։ Սողոմոն սկիհը ձեռին, խաչեցեալի աջ կողմից, ցայտած արիւնի համար. յետեւից մի հրեշտակ ձեռնամած. Երուսաղէմի փոխարէն դմբեթով եկեղեցիներ։ Միւս կողմից մի հրեշտակ, եւ կնոջ դէմքով մի ֆիգուր։ Աւելի ցած աջ կողմից երեք կին, երկու առաքեալ ձախից։ Վերեւի անկիւններում խաւարած լուսին եւ արեգակ եւ մի մի հրեշտակ ցած սաւառնող։ Պատկերի չորս կողի շրջանակի վերայ դրութիւն, որ անկարելի է կարդալ, այնքան վնասած է։

7բ. Համբարձումն. Յիսուս նստած չորեքկերպեան աթոռի վերայ, որ բռնել են չորս սերովբէք, վերեւի երկուսը փողահար։ Ներքեւում առաքեալներն են, նրանց մէջ տեղը Աստուածածին։

8բ, 9ա, 9բ, 10բ, 11ա, 11բ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 14ա, 14բ, 15ա խորաններն են, չափաւոր որակի արուեստով, գոյներն ու գրերն էլ տարբեր թէ բնագրի գրերից եւ թէ բնագրի զարդերի եւ Արասի նկարներից։

8բ, արեւելեան բոլորգրով (անցման երկաթագիր) գրուած է.

«Տր ած ողորմեայ մեղաւորիս։»

13ա. Փոքր երկաթագրով «Ցիշեա տր ած զիզնատիոս եւ զյովսեփ»։ (Պատկ. 4)։

15ա. Խորանի վերեւի գերանի վերայ մութ կանաչ յատակի վերայ «Տր ած ողորմեայ բազմամեղիս ամէն»։

16բ. Մատթէոս աւետարանիչ, (պատկ. 5), արուեստը նոյն է, ինչ որ Տէրունականներինը, այսինքն Արաս նկարչի, որ ինչպէս յետոյ կը տեսնենք, երկց էր։ Աւետարանիչը նստած գրում է, զգեստը սովորական է, լայնաթեւ տունիկայի վերայից ձգել է տոգան, աջ թեւն աղատ է, փաթաթուած է ձախ թեւի վերայից մինչեւ ծնկները։ Գլխի մազերը երկար եւ դէպի թիկունքն իջած, մօրուքը երկար եւ թեթեւ սրածայր։ Լուսոյ պսակը բոլորակ։ Ոտքերի տակ փռուածք։ Աթոռը կոշտ, փայտէ, եւ կողքերից երկու պահարան (ժողովրդական արուեստի հետեւողութեամբ)։ Գիրքը դրուած է ծնկների վերայ, տողատուած, եղեղնեայ գրչով գրել է «Գիր/քծը/նըն/դե/ան/— միւս երեսին,—յի»։ Աւետարանչի յետեւից, քառանկիւնի պատուանդանի եւ սիւնանման զոյգ ձողի վերայ հաստատուած է գրակալ-սեղանը, վերան մի բաժակ դրուած։

Աւելի հետաքրքրական է վերեւի տեսարանը. մէջ տեղում վեց թեւեան սերովբէ, իսկ աջ եւ ձախ կողմից աւետարանչի աթոռի նըման աթոռների վերայ նստած են մի մի պատանի, ԺԲ. դարի վերջերի եւ ԺԳ.ի սկզբների մեղ յայտնի իշխանական զգեստով, նման Հաղբատի աւետարանին։ Գլխարկները չորս կտորներից, մէջէ մէջ կարմիր եւ կանաչ կտորներից։ Հագած են բիւզանդական երկար տունիկայ, ուսերը նաեւ կուրծքը, ասեղնագործուած եւ զարդարուն, երկդոյն կօշիկները մինչեւ ծունկները՝ զոյգ փունջերը կախ ճիտկերից։ Ձախ կողմի պատանին աջով նիզակ ունի բռնած ուսին, իսկ միւսը թուր, երկուսն էլ աջ ձեռքերը մեկնել են դէպի սերովբէն։ Պատանիների կողքից գրուած է «մարդ ըստ մաթէոսի»։ Սերովբէից վեր պատկերի ճակատին մի քանի բառ գրուած, որ վնասած լինելու պատճառով չի կարդացուում։ (Պատկ. 6)։

Մատթէոսի սկիզբը չկայ, սկս «Նոցա Եւ մտեալ ի նաւ. անց յայնկոյս». թերթ 1.

84բ. Մարկոս Աւետարանիչը (պատկ. 7) նստած է նման ձեւի աթոռի վերայ եւ միւս պարագաներն էլ նման Մատթէոսին, միայն գիրքը բաց, ծնկների վերայ, բայց ոչինչ չէ գրած. ձախով գիրքն է բռնած, աջը ծնօտի վերայ, մտածում է գրելիքի մասին, եղեղնեայ գրիչը բռնած։ Պատկերի յատակը կարմիր է, աւետարանչի մազերը մոյգ կարմիր, լուսապսակը դեղնաւուն։ Յետեւի կողմից գրակալն է, տարբեր ձեւակերպութեամբ, վերան դանակ եւ բաժակ դրած։ Վերեւը նստած է նման հագուստով մի պատանի, ինչպէս Մատթէոսի վերեւի զոյգ պատանիները, այստեղ միայն նստած գիրքով. աջ ձեռքով ուսին է դրել նիզակ, իսկ ձախով մի անօթ, մէջը խնձոր դարսած, մատուցանում է յետեւի ոտների վերայ պլպլցած եւ պոչը վեր բարձրացրած առիւծին։

Սկզբնազարդը տարբեր ոճով, ունի Խնդրուածքի (դէղեխս) խմբանկար. (Պատկ. 8). Քրիստոս նստած, աջից Մարիամ եւ ձախից Յովհաննէս բարեխօս։ Ս-ն բուսական զարդով եւ մեծ, ունի եւ լուսանցքի զարդ՝ խաչով վերջացած։ Այս սկզբնազարդը, ինչպէս եւ աւետարանի առաջին բառը «Սկիզբն» կապուած է բնագրի հետ, որովհետեւ նոյն